

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը հայտարարում է մրցույթ՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող և օտարման ենթակա տրանսպորտային միջոցների և գյուղտեխնիկայի մրցութային կարգով վաճառքի վերաբերյալ:

Մրցույթը տեղի կունենա 2019 թ.-ի **հոկտեմբերի 28-ին, 15.00-ին**, ՀԱՍՀ 1-ին մասնաշենք, 2-րդ հարկ, «Գիտական խորհրդի նիստերի դահլիճում»:

1. Օտարման առարկա տրանսպորտային միջոցների և գյուղտեխնիկայի տվյալները
1.1 Հետևյալ հղմամբ տեղադրված են տրանսպորտային միջոցների և գյուղտեխնիկայի (այսուհետ՝ Գույք) տվյալների մանրամասները, այդ թվում տեխնիկական պարամետրեր, մեկնարկային գին և այլն (այսուհետ Ցանկ): link: https://docdro.id/1OczfA
1.2 Մրցույթին մասնակցելու և գնային առաջարկի հայտը (այսուհետ՝ Հայտ) և կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը կարող եք ներբեռնել հետևյալ հղմամբ link: https://drive.google.com/file/d/1KfUSwk8EATF1LX5zxl8pLSZUa6h2LoaE/view?usp=sharing
2. Մրցույթի կարգը և պայմանները
2.1 Մրցույթի կազմակերպիչ է հանդիսանում «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ), որի կողմից սահմանված մրցութային Կարգ -ին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ link: https://docdro.id/kYmbL3g
2.2 Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է Հիմնադրամ ներկայացնել Հայտը և մասնակցության վճարը հավաստող փաստաթուղթ՝ ք. Երևան, Տերյան 74 հասցեով, 1-ին մասնաշենք, 129 սենյակ, մինչև հոկտեմբերի 25-ը, ժամը 17.00-ն :
2.4 Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Հիմնադրամ 012 583452, կամ 012 528516 հեռախոսահամարներով Լիլիթ Աթանայանին կամ ուղարկել հաղորդագրություն alilits@mail.ru , h.zakeyan@anau.am էլեկտրոնային հասցեներին:
2.5 Մրցույթի մասնակիցները կարող են տեսնել և ուսումնասիրել Գույքը մինչև Հայտերի ներկայացման վերջին օրը՝ աշխատանքային օրերին: Ձեզ հետաքրքրող Գույքի գտնվելու վայրի հասցեն կարող եք նախօրոք ճշտել վերոհիշյալ հեռախոսահամարներով:
2.6 Հայտով նախատեսված տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացվում են Հիմնադրամ ՝ փակ և կնքված (իրավաբանական անձի կնիքով՝ առկայության դեպքում) կամ ստորագրված (ֆիզիկական անձի կողմից) ծրարով: Հայտի ծրարի վրա կատարվում են հետևյալ գրառումները. <ul style="list-style-type: none">• «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ,• «տրանսպորտային միջոցների և գյուղտեխնիկայի մրցութային կարգով վաճառքի մասնակցության և գնային առաջարկի հայտ»,• ֆիզիկական անձի դեպքում՝ հայտատուի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը և ՀՎՀՀ,• հայտատուի հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև գտնվելու վայրը,• Լոտի համարը (կարող եք գտնել 1.1 հղումով՝ Ցանկում):
Ծրարին կից ներկայացվում է մասնակցության վճարը հավաստող փաստաթուղթը:
3. Մրցույթի արդյունքների ամփոփում
3.1 Տրանսպորտային միջոցի կամ գյուղտեխնիկայի ձեռք բերման համար մասնակցի

առաջարկած գինը չի կարող պակաս լինել **Յիմնադրամի** կողմից առաջարկվող մեկնարկային գնից:

3.2 Եթե առաջարկված լոտի համար ընդամենը մեկ գնման հայտ է ներկայացվել, ապա գործարքը կատարվում է հայտում առաջարկվող գնով:

3.3 Մրցույթն ամփոփվելուց հետո **Յիմնադրամը** առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է մրցույթի հաղթողին (այսուհետ **Գնորդ**) մրցույթի արդյունքների մասին: Մնացած մասնակիցները տեղեկացվում են մասնակցության վճարի վերադարձման կարգի մասին:

3.4 Եթե **Գնորդը** հրաժարվում է վճարել հաղթած լոտի համար, ապա վերջինիս չի վերադարձվում մասնակցության վճարը և հաղթող է ճանաչվում տվյալ **Գույքի** ձեռք բերման համար հաջորդ առավել բարձր գին ներկայացրած մասնակիցը:

4. Մրցույթի հաղթողի հետ գումարի վճարման կարգն ու պայմանները

4.1 Գործարքի վավերացման և գրանցման հետ կապված բոլոր տեսակի ծախսերը կատարում է **Գնորդը**: **Գնորդը Գույքի** արժեքը վճարում է միանվագ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ բանկի համապատասխան հաշվին Յ/հ 2470100531030000, 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մասնակցության վճարը:

4.2 **Գնորդը** պարտավորվում է իր միջոցներով տեղափոխել մրցույթով ձեռք բերված **Գույքը** ծանուցվելու օրվանից 10 օրվա ընթացքում, հակառակ դեպքում կկիրառվեն **Գույքի** պահպանության հետ կապված վճարներ: